# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

***Հիմք ընդունելով <<Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն>> հասարակական կազմակերպության 2024 թվականի նոյեմբերի 28-ի գրությունը, ինչպես նաև 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 52-25 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 540000 ՀՀ դրամ տեղափոխել 01.3.3 ծրագիր 4232 հոդված՝ Սիսիան համայնքի համար կառավարման տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերում:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի փետրվարի 28-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 564172 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4213 հոդված՝ Սիսիան համայնքի Սպանդարյան և Իշխանասար բնակավայրերի վարչական շենքերի 2023-2025 թվականների ընթացքում ծախսված և պլանավորվող խմելու ջրի վճարումները կատարելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ ժ/պ Վ. Մանուչարյանի 2025 թվականի փետրվարի 14-ի և 27-ի թվով 3 զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 86000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի Ախլաթյան բնակավայրի վարչական շենքի էլեկտրական էներգիայի սպառման համակարգի հզորության փոփոխության համար:
2. 86000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի վարչական շենքի էլեկտրական էներգիայի սպառման համակարգի հզորության փոփոխության համար:
3. 55000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4269 հոդված՝ Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի Սիսական 41 վարչական շենքի էլեկտարական էներգիայի եռաֆազ հաշվիչ սարք ձեռքբերելու համար:
4. 55000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4269 հոդված՝ Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի ակումբի շենքի էլեկտրական էներգիայի եռաֆազ հաշվիչ սարք ձեռքբերելու համար:
5. 55000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4269 հոդված՝ Սիսիան համայնքի Ախլաթյան բնակավայրի վարչական շենքի էլեկտրական էներգիայի եռաֆազ հաշվիչ սարք ձեռքբերելու համար:
6. 55000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4269 հոդված՝ Սիսիան համայնքի Շաղատ բնակավայրի վարչական շենքի էլեկտրական էներգիայի եռաֆազ հաշվիչ սարք ձեռքբերելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 006-Ա որոշումը, ինչպես նաև <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի 2025 թվականի փետրվարի 27-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 1586000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 006-Ա որոշումը, ինչպես նաև 2025 թվականի փետրվարի 27-ի <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Մարգարյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 1540000 ՀՀ դրամ տեղափոխել 05.1.1 ծրագիր 4511 հոդված՝ <<Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ին <<Աղբահանում>> ծրագրով տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 006-Ա որոշումը, ինչպես նաև 2025 թվականի փետրվարի 27-ի <<Էմմա Այանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Ռուբիկ Բարսեղյանի, << Սիսիանի համայնքի շախմատի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Սամվել Մկրտչյանի, << Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Նարինե Գրիգորյանի, << Սիսիանի ֆուտբոլի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Արզումանյանի, << Ջ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն Հովիկ Իսաջանյանի գրությունները և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու***

***որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 13090729 ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 4511 հոդված՝ <<Էմմա Այանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ին, << Սիսիանի համայնքի շախմատի դպրոց>> ՀՈԱԿ-ին, << Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն>> ՀՈԱԿ-ին, << Սիսիանի ֆուտբոլի դպրոց>> ՀՈԱԿ-ին, << Ջ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարները ավելացնելու համար:

***Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի մարտի 3-ի թվով 3 զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝***

1. 600000 ՀՀ դրամ տեղափոխել 06.3.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Անգեղակոթ, Արևիս-/2/ ՕԿՋ, Բալաք, Բնունիս, Գետաթաղ, Նորավան, Շաղատ, Շաքի, Որոտնավան, Սալվարդ, Գորայք բնակավայրերում առկա ՕԿՋ-ների սանիտարական գոտիների ցանկապատերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային ծառայությունների ձեռքբերման համար:
2. 2000000 ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի <<Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքի նախագծանախահաշվային և փորձաքննության լրամշակման ծառայությունների ձեռբերման համար:
3. 350000 ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի նախկին պարարվեստի դպրոցի շենքի փորձաքննության լրամշակման ծառայությունների ձեռբերման համար:

***Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝***

1. 3200000 ՀՀ դրամ տեղափոխել 04.5.1 ծրագիր 4511 հոդված՝ «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ-ի պետական գրանցում ստանալու պահից, տնօրենի հաստիքով նախատեսվող վճարումների համար տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

***Ավագանու որոշման նախագծով առաջարկվում հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.***

1. Սիսիան համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 06.3.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 97754343,05 (իննսունյոթ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր քառասուներեք ամբողջ հինգ հարյուրերրորդական) ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**04.03.2025թ.**

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 97754343,05 (իննսունյոթ միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր քառասուներեք ամբողջ հինգ հարյուրերրորդական) ՀՀ դրամով:

**Ֆինանսատնտեսական բաժնի պետ** **Դ. Այվազյան**

**04.03.2025թ.**